

ներկայացնում նաև Վեստ Սարգսի և Գրիգոր Մազիստրոսի թողած արձանագրությունները¹⁰։

шевич, Три анийские надписи XI века из эпохи византийского владычества, Петербург, 1921: Ահարոն Բուլդարի և Բաղարատ Վիկացու արձանագրությունները ունեն նաև Ֆրանսերեն թարգմանություն: Sél. u M. Brosset, Rapports sur un voyage archéologique dans la Géorgie et dans l'Arménie, 1re livraison, St.-Petersbourg, 1849, էջ 93—94:

¹⁰ Sél. u Կ. Կոստանյանց, Վիմական

Ահա համառոտ գծերով մեր դիտողությունները Ի. Կարայաննոպուլոսի ընդհանուր առմամբ մեծարժեք աշխատության մասին: Հայկական աղբյուրների ավելի լիակատար օգտագործումը է՛լ ավելի կբարձրացնի դրա արժեքը, և ցանկալի է, որ հեղինակը գրքի նոր հրատարակության ժամանակ այդ հարցին ավելի հանգամանորեն անդրադառնա:

Հ. ԲԱՐԹԻՅԱՆ

տարեգիր, Ս.-Պետերբուրգ, 1913, էջ 17—18, 22, 23:

«ԹՈՒՐԲԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ», հատ. Դ., թարգմանություն բնագրից Ա. Խ. Սաֆրաստյանի և Գ. Հ. Սանթուրջյանի, Երևան, 1972, 258 էջ, գինը՝ 1 ռ. 10 կ.:

Հայ ժողովրդի պատմության բաղմակողմանի ուսումնասիրության համար բյուզանդական, արաբական, պարսկական և այլ աղբյուրների հետ միաժամանակ կարևոր նշանակություն ունեն նաև թուրք պատմագիրների հաղորդած նյութերը:

«Թուրքական աղբյուրների» գիտական ուսումնասիրության ու թարգմանության նախաձեռնությունը (ինչպես նաև հրապարակումը) պատկանում է հանգուցյալ Ա. Խ. Սաֆրաստյանին: Այսօր ընթերցողի սեղանին դրված «Թուրքական աղբյուրների» չորրորդ հատորը, ինչպես նաև նախկինում հրապարակված երեք հատորները¹, հանդիսանում են նրա երկար տարիների արգասավոր և քրտնաջան աշխատանքի արդյունքը: Մինչ Ա. Խ. Սաֆրաստյանը հայ պատմագրության մեջ ոչ ոք հատուկ չէր դրադվել թուրքական աղբյուրները վերծանելու, թարգմանելու և գիտական շրջանառության մեջ դնելու խնդրով: Նա առաջինն էր, որ ձեռնարկեց օսմաներենի և հատկապես արաբերենի պարսկերենի իրավական և պատմական տերմինների թարգմանության բարդ գործը:

¹ Տե՛ս Ա. Խ. Սաֆրաստյան, Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, հատ. Ա, Երևան, 1961, հատ. Բ, Երևան, 1964: Ա. Խ. Սաֆրաստյան, Թուրքական աղբյուրները, հատ. Գ, էվլիյա Չելեբի, Երևան, 1967: Դժբախտաբար Ա. Խ. Սաֆրաստյանին չհաջողվեց ավարտել աշխատության չորրորդ հատորը: Աշխատանքը լրացրեց և հրատարակության պատրաստեց հանգուցյալ Գ. Հ. Սանթուրջյանը:

Ա. Խ. Սաֆրաստյանը օգտագործել է օսմանյան պաշտոնական տարեգիրների և ընդհանրապես պատմագիրների երկերը: Թվով 30 թուրք պատմագիր-տարեգիրների շարքում կան, իհարկե, երկրորդական նշանակություն ունեցող պատմագիրներ, և կան այնպիսիները, որոնք մեծ տեղ են բռնում օսմանյան պետության տարեգրության մեջ: «Թուրքական աղբյուրները» մատենաշարի չորս հատորներում ընդգրկվել են թուրքական այն պատմագիր-տարեգիրների երկերը, որոնք հետաքրքրություն են ներկայացնում հայ ժողովրդի պատմության համար: Անհրաժեշտ է նշել, որ Ա. Խ. Սաֆրաստյանը չի սահմանափակվել միայն հայ ժողովրդի պատմությանը վերաբերող նյութերի թարգմանությամբ, նշված հատորները բավական հարուստ նյութ են պարունակում նաև Անդրկովկասի հարևան ժողովուրդների պատմության ուսումնասիրության համար:

Առաջին հատորում ժամանակագրական կարգով տրված են նյութեր հետևյալ տարեգիրներից՝ Փեշևի, Մուստաֆա Նայիմա, Ռաշիդ, Իսմայիլ Ասրմ էֆենդի Չելեբի Ջադե, Սուրհի, Սամի, Շաբիր, Սուլեյման Իվլի, Վասըֆ և Ահմեդ Ջեդեթ փաշա:

1 հատորում և մասամբ էլ երկրորդ հատորում ամփոփված, քաղվածաբար արված թարգմանությունները հիմնականում վերաբերում են XVI դարի սկզբին ծավալված իրանա-թուրքական պատերազմների մանրամասն նկարագրությանը, որոնք որոշ դադարներով շարունակվեցին մինչև XVIII դ.: Այդ պատերազմները ծավալվեցին մասնավորապես հայերի բնօրրանը հանդիսացող պատմական Հայաստանի հողի վրա, որի հետևանքով մեծապես տուժեց տա-

րարախոս հայ ժողովուրդը՝ Պատերազմների արհավիրքների հետևանքով հայ ժողովուրդը ապրում էր ծանր պայմաններում։ Դժբախտաբար թուրք պաշտոնական պատմագիրները իրենց պատմություններում շատ քիչ են անդրադարձել ժողովուրդների տնտեսական և սոցիալական իրավիճակի հարցերին։ Շատ շնչին բացառությամբ, նրանք իրենց գրվածքներում անդրադարձել են գլխավորապես սուլթանների, վեզիրների փառաբանման խնդրին, քաղաքական իրադարձություններին, հատկապես հաղթական արշավանքի, կողոպուտի ու թալանի նկարագրություններին։

II հատորում մեծ տեղ է հատկացված XVII դարի ականավոր պատմագիր և աշխարհագրագետ Քյաթիր Չելեբիի երկու աշխատություններից՝ «Ջիհան-Նյումայից» («Աշխարհի հայելի») և «Ֆելեբեից» («Համառոտ պատմություն») քաղվածաբար թարգմանված նյութերին։ Քյաթիր Չելեբին իր ուրույն տեղն ունի օսմանյան պատմագրության, աշխարհագրության, մատենագիտության, փիլիսոփայության և այլ գիտությունների զարգացման բնագավառում։ Նրա աշխատությունները արժեքավոր սկզբնաղբյուր են օսմանյան կայսրությունում տեղի ունեցած պատմական դեպքերի ու իրադարձությունների ուսումնասիրության համար։ Առանձին հետաքրքրություն է ներկայացնում «Ջիհան-Նյուման», որի քառասունմեկերորդ գլուխը ամբողջապես նվիրված է պատմական Հայաստանի նկարագրությանը։ Թուրք մտավորականը այստեղ տվել է տեղեկություններ Հայաստանի սահմանների, նրա վարչական բաժանման և այլնի մասին։ «Ֆելեբեի» մեջ, բացի իրանա-թուրքական պատերազմների նկարագրությունից, խոսվում է նաև ջելալիական շարժման մասին։

Հատորի հաջորդ տարեգրիներից (Սելանիկի Մուստաֆա՝ XVII դ., Սուլաթ Զադե՝ XVII դ. և Շանի Զադե՝ XVIII դ.) բերված նյութերը նույնպես մեծ մասամբ վերաբերում են թուրք-իրանական պատերազմներին, ջելալիական շարժմանը, ենիչերիական խռովություններին և այլն։ Մյուսնեջիմ բաշին պարսկերեն և արաբերեն սկզբնաղբյուրների հիման վրա գրել է թուրքերեն լեզվով առաջին ընդհանուր պատմությունը, ուր ընդգրկված է նաև հայ ժողովրդի համառոտ պատմությունը չորս մասով. 1) Հայկյաններ, 2) Արշակունիներ, 3) Բագրատունիներ, 4) Ռուբինյաններ։ Ֆերիզուն բեյից բերված նյութերը վերաբերում են օսմանյան կայսրության XIV—XVI դարերի ներքին և արտաքին քաղաքականության բաղմամբիվ հարցերին, որոնք մասամբ առնչվում են նաև հայ և Անդրկովկասի մյուս ժողովուրդների պատմու-

թյան հետ։ Մեծ հետաքրքրություն և կարևորություն են ներկայացնում Ֆերիզուն բեյից բերված քաղվածքները օսմանյան կայսրության պետական վարչական բաժանման մասին։ Ուշագրավ են նաև Կոչի բեյի «Ռիսալեից» («Զեկուցագիր») բերված նյութերը, որոնք վերաբերում են կայսրության քայքայման և անկման դրդապատճառներին և սոցիալ-տնտեսական վիճակի խիստ վատթարացման հարցերին։

III հատորում ընդգրկված են XVII դարի թուրք պատմաբան, աշխարհագրագետ և ճանապարհորդ էվլիյա Չելեբիի (1611—1679) «Սեյահսեմեի» («Ուղեգրություն») այն գլուխները, որոնք վերաբերում են Հայաստանին։ էվլիյա Չելեբին ճանապարհորդել է բաղմամբիվ երկրներում, այդ թվում և Հայաստանում, անցել է նրա կարևոր քաղաքներով, գյուղերով ու բերդերով։ Հայ ընթերցողի համար առավել մեծ հետաքրքրություն են ներկայացնում էվլիյա Չելեբիի ուղեգրությունից բերված այն նյութերը, որոնք իրենց պատմական, աշխարհագրական, տնտեսական, հնագիտական, ազգագրական և կուլտուր-կենցաղային բնույթով լրացնում են մյուս թուրք պատմագիրներին։ Դրքում կան նաև Արևմտյան Հայաստանի վարչական բաժանման և հարկային սիստեմի մասին կարևոր տեղեկություններ։ Մանրամասն նկարագրված են նաև Հայաստանի վանքերը, եկեղեցիները, իջևանատները, հուշարձանները, շուկաները, արհեստները, կլիման, բերքն ու արդյունագործությունը և այլն։

Ժամանակագրական տեսակետից IV հատորը ընդգրկում է XIX դարի երկրորդ կեսի և XX դարի առաջին տասնամյակի դեպքերի շարադրանքը։ Ներկա եզրափակիչ հատորը նախորդ հատորների նման իրենից ներկայացնում է արժեքավոր աղբյուրագիտական աշխատություն, ուր ընդգրկված են հետաքրքիր նյութեր ոչ միայն թուրք տարեգիր պատմագիրների (Ահմեդ Լուիֆի՝ 1815—1907, Աբդուրահման Շերեֆ՝ 1853—1925), այլև նոր շրջանի պատմաբանների երկերից (Մեհմեդ Քյամիլ փաշա՝ 1832—1912, Օսման Նուրի՝ 1875—1909)։

Մեր կարծիքով իրենց բովանդակությամբ և ծավալով ավելի հետաքրքրություն և կարևորություն են ներկայացնում Ահմեդ Լուիֆիի ութհատորանի տարեգրությունից և Օսման Նուրիի՝ «Աբդուլ Համիդ երկրորդը և նրա իշխանության շրջանը» աշխատությունից կատարված նյութերի թարգմանությունները։ Մանավանդ Օսման Նուրիի գրքից բերված նյութերը վերաբերում են 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմին, հայ ժողովրդի համար մեծ նշանակություն ունեցող Հայկական հարցին, հայկական կոտորածների համեմատաբար օբյեկ-

տիվ նկարագրությունը և ընդհանրապես Աբդուլ Համիդի վարած արյունալի քաղաքականությունը Արևմտյան Հայաստանում:

Ինչ, խոսք, որ թուրք տարեգիրների և պատմաբանների եզրակացություններն ու գնահատականները (դրական թե բացասական) կհետաքրքրեն առաջին հերթին այն հայ պատմաբաններին, որոնք ի վիճակի չեն օգտվելու տվյալ ժամանակաշրջանի օսմաներեն բնագրից (արաբատառ թուրքերենից):

Ընդհանուր գնահատականի ենթարկելով Ա. Խ. Սաֆրաստյանի «Թուրքական աղբյուրները» խորագիրը կրող մատենաշարը, պետք է ասել, որ այն զերծ չէ նաև որոշ թերություններից: Ծիշտ է, որ սկզբնաղբյուրների գիտական թարգմանություններում, որպես հիմնական սկզբունք ընդունված է ոչ միայն ճշգրտորեն տալ տվյալ տեքստի թարգմանությունը, այլև հնարավորին չափ պահպանել բնագրի կառուցվածքը և յուրահատկությունը: Այսուհանդերձ երբեմն հանդիպում են դժվար բառակապակցություններ և նախադասություններ, որոնց թարգմանության ընթացքում անհրաժեշտ է լինում օգտագործել լրացուցիչ բառեր կամ նույնիսկ արտահայտություններ: Բնչպես ընդունված է, այդ լրացուցիչ տարրերը անհրաժեշտ է քառակուսի փակագծերի մեջ առնել, սակայն այս կանոնը միշտ չէ, որ պահպանվել է Ա. Խ. Սաֆրաստյանի թարգմանություններում:

Առաջին և երկրորդ հատորների մեջ քաղվածաբար թարգմանություններ կան տարբեր թուրք պատմագիր-տարեգիրների պատմություններից, որոնք ոչ միայն կրկնել են իրար, այլև նույն նյութը ամբողջովին արտագրել են իրարից: Դրա համար էլ փոխանակ տարբեր հեղինակներից միևնույն նյութի թարգմանությունները կատարելու, կարելի էր վերցնել առավել հավաստի սկզբնաղբյուրը և առանց կրճատման ներկայացնել ընթերցողին: Օրինակ, XVII դ. տեղի ունեցած իրանա-թուրքական պատերազմները բերված են թե՛ առաջին հատորում (Մուստաֆա Նայիմայի պատմությունից)², և թե՛ երկրորդ հատորում (Քյաթիր Չելեբիի «Ֆեղլեքեից»)³: Մուստաֆա Նայիման իր պատմությունը շարադրելիս ոչ միայն օգտագործել է «Ֆեղլեքեից», այլև ամբողջովին արտագրել է այն, ուստի առավել նպատակահարմար կլիներ տալ միայն «Ֆեղլեքեից» հայ ժողովրդի պատ-

մությունը վերաբերող նյութերի թարգմանությունը:

Մյուս հատորների նման ցանկալի էր, որ IV հատորն էլ լրացվեր անհրաժեշտ առաջաբանով և ծանոթագրություններով և մանրամասն լուսաբանվեին հատկապես Օսման Նուրիի զորքից բերված մտքերը, որոնք աղավաղում են իրականությունը: Այսպես, օրինակ, Հայկական հարցին վերաբերող գլխում (էջ 168) կարդում ենք հետևյալը. «Այդ ժամանակաշրջանում օսմանյան երկրում հայերը վայելում էին կատարյալ ազատություն: Եկեղեցիներում ազատորեն կատարում էին բոլոր տեսակի ծեսերն ու արարողությունները, պալատում, կայսերական գանձարանում, բարձրագույն դռնում ծառայում էին բազմաթիվ հայ բարձրաստիճան պաշտոնյաներ»: Հեղինակը պարզապես շրջում է փաստերը:

Այնուհետև 173 էջում կարդում ենք. «Սասունի ապստամբությունը տեղի ունեցավ 1894 թ. հոկտեմբերին: Հենց որ շարժումը սկսվեց, իսկույն միջամտեցին դեսպանները: Եվրոպական պետությունների կողմից դեսպի վայր ուղարկվեց քննիչ հանձնաժողով»: Այստեղ Ահմեդ Ռեֆիկը շրջանցում է Սասունի հայկական կոտորածը, որը իրականացրեց Բիթլիսի թուրքական բանակը համիդեական քրդական հեծելազորների մասնակցությամբ: Բացի այդ, մեծ տերությունների ներկայացուցիչներից կազմված հանձնաժողովը տեղ է հասել ջարդից հետո՝ 1895 թ. հունվարի 23-ին: Հայտնի է նաև, որ Սասունի կոտորածը սուլթանական կառավարության գիտակցորեն կազմակերպած գործն էր:

Առանձին տեղերում թուրք հեղինակը խոսել է Աբդուլ Համիդի՝ հայերի նկատմամբ վարած դաժան քաղաքականության մասին, կանգ է առել XIX դարի վերջում տեղի ունեցած հայկական կոտորածների վրա, սակայն անգամ այդ հատվածներում կան սխալ մտքեր:

Այս բոլորի մասին պետք է խոսվեր առաջաբանում և ծանոթագրությունների մեջ:

Անհրաժեշտ է նշել, որ Քյամիլ փաշայի և Արդուրահման Շերեֆի աշխատություններից բերված նյութերը կցկտուր են և բոլորովին չեն առնչվում հայ ժողովրդի պատմության հետ: Լավ կլիներ, որ այդ նյութերը ընդհանրապես չընդգրկվեին գրքի մեջ:

Հայտնի է, որ օսմաներենում «հիսար» (hisar) բառը ունի երկու նշանակություն՝ բերդ և պարիսպ: Մի շարք տեղերում այս բառը թարգմանվել է որպես պարիսպ, երբ այն տրվել էր տեքստի մեջ ունի բերդի նշանակություն:

2 Ա. Խ. Սաֆրաստյան, Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկուկասի մյուս ժողովուրդների մասին, հատ. Ա, էջ 66:

3 Նույն տեղում, տ. Բ, էջ 85:

4 Նույն տեղում, էջ 33:

Մյուշթեմել (müştəmel) բառը ունի «պարունակող», «բովանդակող» նշանակությունը, մինչդեռ այն թարգմանված է որպես տեղանուն: «Մյուշթեմելը գտնվում է Սիվասից երեք օրվա հեռավորության վրա»⁵, նույնպես և «բեյնեհյումա» (beynehüma) բառը, որը թարգմանության մեջ սխալմամբ գրված է «նինհիմե»⁶, Բնագրի հետ մի շարք հատվածների համեմատումը ցույց տվեց, որ ընդհանուր առմամբ թարգմանությունը կատարված է ճիշտ և գիտական բարձր մակարդակով, սակայն մի շարք տեղերում թույլ են տրված որոշ անճշտություններ: Օրինակ, 38-րդ էջում (II հատոր) գրված է. «Այստեղ բազմամարդ է թերսա ցեղը», այնինչ պետք է լինի. «Այստեղ բազմամարդ են

քրիստոնյաները»: Հավանաբար վրիպակի հետևանքով է, որ թուրքերեն հետևյալ նախադասությունը՝ «Kali Kala dedikleri Erzurum dur» գրքում շարադրվել է «Ժայռերի այս շարանը կոչվում է «Կալիկալի սաստ» (II հատ., էջ 42): Իրականում պետք է լինի. «Կալիկալա ասվածը էրզրումն է»:

Կան նաև միևնույն քաղաքի կամ հատուկ անունների տարբերակներ. օրինակ՝ Երեվան—Րևան, աճեմ—պարսիկներ, Վրաստան—Գյուրջիստան, կըզըլբաշներ—կարմրագլուխներ:

Նշված թերությունները, իհարկե, չեն կարող նսեմացնել մատենաշարը, քանի որ այն արժեքավոր ներդրում է հայ պատմագրության մեջ:

⁵ Նույն տեղում, էջ 42:

⁶ Նույն տեղում, էջ 62:

Ա. ՓԱՓԱՋԱՆ,

Colophons of armenian manuscripts, 1301—1480 Selected, Translated, and Annotated by AVEDIS K. SANJIAN. Harvard University Press, 1969.

Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, 1301—1480: Ընտրեց, թարգմանեց և ծանոթագրեց ԱՎԵՏԻՍ ՍԱՆՋԻԱՆԸ, հրատարակությամբ Հարվարդի համալսարանի, 1969 թ.:

Հայաստանի և Միջին Արևելքի երկրների պատմության ուսումնասիրության համար, հարցերի ընդգրկման բազմազանությամբ բացառիկ արժեք են ներկայացնում հայերեն ձեռագրերի հիշատակարանները: Նրանցում փաստական հարուստ նյութեր կան Հայաստանի և հարևան երկրների քաղաքական, սոցիալ-տնտեսական ու կուլտուրական կյանքի վերաբերյալ, որոնք ավելի արժանահավատ են, քան այլ կարգի սկզբնաղբյուրները: Գրիչները, ականատես ու ականաչալուր լինելով կատարվող իրադարձություններին, ավել են նրանց օբյեկտիվ ու ճշմարտացի նկարագիրն ու զնահատականը:

Եթե ժամանակագիրներն ու պատմագիրները գրի են առել իրենցից տարիներ առաջ կատարված դեպքերը՝ ուշադրության կենտրոնում պահելով պատմության համար կարևոր իրադարձությունները, ապա հիշատակարանները տեղեկություններ են պարունակում իրենց ժամանակում տեղի ունեցած և ժողովրդին բազմապիսի դառնություններ ու զրկանքներ բերող այնպիսի դեպքերի մասին, ինչպիսիք են հաճախակի ձրկնվող երաշտը, սովը, թանկությունը, տարափոխիկ հիվանդությունները և այլ աղետները, որոնք չեն արձանագրվել պատմիչների կողմից:

Հայերեն ձեռագրերի հիշատակարանների գրիչները, սերված լինելով մեծ մասամբ աշխա-

տավոր ժողովրդից, նրա հետ ապրել են այն բոլոր դառնություններն ու զրկանքները, որոնք օտար նվաճողները պատճառել են ժողովրդին: Հետևապես հայ աշխատավոր ժողովրդին օտար նվաճողների բերած բազմապիսի աղետները նկարագրվել են ավելի ճշմարտացի: Զեռագրերի հիշատակարանները առավել կարևոր սկզբնաղբյուր են XIV դարի երկրորդ կեսի և XV դարի պատմության ուսումնասիրության համար, քանի որ այս շրջանում հայ պատմագրությունը չավելցալիքի բնկնող գործ:

XIV—XV դարերի հիշատակարանների մյուս առանձնահատուկ կողմն այն է, որ հարուստ նյութեր են պարունակում նվաճողների վարած հարկային քաղաքականության՝ հարկերի ու հարկահավաքման եղանակների, սոցիալ-տնտեսական և իրավական նորմերի, հայ աշխարհիկ իշխանական տների և հողատիրության աստիճանական քայքայման, վանքապատկան հողատիրության բնդարձակման, ֆեոդալական շահագործման ձևերի, աշխատավոր զուլաացիության ծանր վիճակի, գյուղական համայնքի և այլ հարցերի վերաբերյալ:

Անշուշտ այս կարևոր առանձնահատկություններն են նկատի ունեցել մեր մշակույթի մեծ երախտավորները, որոնք իրենց աշխատությունները շարագրելիս՝ ուշադրության կենտ-